ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հայաստանի Հանրապետություն, 0010, ք. Երևան, Տիգրան Մեծ 4, հեռ.՝ (+374 60) 830 840, (+374 60) 830 850
Էլ-փոստ՝ info@competition.am, վեբ կայք՝ //www.competition.am

«07» 04 2022 թ.
No ՄՊՀ-ՈՐՈՇՈՒՄ/07.04-2022

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁ
ԳԱՐԵԳԻՆ ԱՐՄԵՆԻ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ
(Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Հալաբյան 23 շենք, բն. 6)

Հարգելի՛ պարոն Մկրտչյան,

Կից ուղարկվում է Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի 2022 թվականի ապրիլի 5-ի ««Բելգլաս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության և ֆիզիկական անձինք Գարեգին Արմենի Մկրտչյանի ու Արաշ Նոսրաթիալամդարիի նկատմամբ պատասխանատվության միջոց կիրառելու մասին» թիվ 124-Ա որոշման պատճենը:

Առդիր՝ 12 թերթ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ **ԱՇՈՏ ՎԱՀԱՆՅԱՆ**

Համակենտրոնացումների, պետական օժանդակության և պետական գնումների վերահսկողության բաժին
Կատարող՝ Աննա Կոստանյան
Հեռ՝. (+374 60) 830 840 (233)

competition.am կայքում հրապարակման օրը՝ 13 հունիսի 2022 թվական:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

5 ապրիլի 2022 թվականի թիվ 124-Ա

«ԲԵԼԳԼԱՍ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԻՆՔ ԳԱՐԵԳԻՆ ԱՐՄԵՆԻ ՄԿՐՏՉՅԱՆԻ ՈՒ ԱՐԱՇ ՆՈՍՐԱԹԻԱԼԱՄԴԱՐԻԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Մրցակցության պաշտպանության հանձնաժողովը (այսուհետ նաև՝ **Հանձնաժողով**) 2022 թվականի ապրիլի 5-ի նիստում, քննարկելով «Բելգլաս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ նաև՝ **Ընկերություն**) և ֆիզիկական անձինք Գարեգին Արմենի Մկրտչյանի ու Արաշ Նոսրաթիալամդարիի նկատմամբ պատասխանատվության միջոց կիրառելու մասին հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. <u>Վարույթի ընթացքի հակիրճ նկարագրությունը</u>.

Հանձնաժողովը 2022 թվականի հունվարի 18-ի ««Բելգլաս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության և ֆիզիկական անձինք Գարեգին Արմենի Մկրտչյանի ու Արաշ Նոսրաթիալամդարիի կողմից տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցելու մասին» թիվ 27-Ա որոշմամբ (այսուհետ նաև՝ **Թիվ 27-Ա որոշում**) հարուցել է վարույթ (այսուհետ նաև՝ **Վարույթ**):

2. <u>Վարույթի հարուցման առիթի և հիմքի հակիրճ նկարագրությունը</u>.

Հանձնաժողովի մրցակցության գնահատման և վերահսկողության վարչության համակենտրոնացումների, պետական օժանդակության և պետական գնումների վերահսկողության բաժնի կողմից 2021 թվականի դեկտեմբերի 23-ին ներկայացվել է զեկուցագիր, որում նշվել է, որ, Ընկերությունը, Հայաստանի Հանրապետության քաղաքացի Գարեգին Արմենի Մկրտչյանն ու Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքացի, Հայաստանի Հանրապետությունում մշտական կացության կարգավիճակ ունեցող Արաշ Նոսրաթիալամդարին 2021 թվականի դեկտեմբերի 17-ին Հանձնաժողով են ներկայացրել

հայտարարագրման ենթակա համակենտրոնացման թույլտվության վերաբերյալ դիմումներ (այսուհետ նաև՝ **Դիմումներ**)։ Դիմումներով ներկայացված տեղեկատվության և Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության (այսուհետ՝ **Ռեգիստր**) https://www.e-register.am/ պաշտոնական էլեկտրոնային համակարգում առկա տեղեկատվության համադրման արդյունքում պարզ է դարձել, որ ֆիզիկական անձինք Գարեգին Մկրտչյանի և Արաշ Նոսրաթիալամդարիի կողմից Ընկերության կանոնադրական կապիտալի համապատասխանաբար 33 տոկոս և 33,5 տոկոս բաժնեմասերի ձեռքբերման գործարքները Ռեգիստրում գրանցվել են 2021 թվականի նոյեմբերի 29-ին:

Համաձայն 2021 թվականի նոյեմբերի 24-ին կնքված Ընկերության կանոնադրական կապիտալի 33 տոկոս և 33,5 տոկոս բաժնեմասերի առուվաճառքի մասին պայմանագրերում փոփոխություններ և լրացումներ կատարելու (հետաձգող պայման սահմանելու) մասին համաձայնագրերի 2-րդ կետով պայմանագրերի հետաձգող պայման է հանդիսացել Ընկերության կանոնադրական կապիտալում 33 տոկոս և 33,5 տոկոս բաժնեմասերի համար Հանձնաժողովի կողմից օրենքով սահմանված կարգով համակենտրոնացման թույլտվություն տալը: Մինչդեռ Ընկերության և ֆիզիկական անձինք Գարեգին Մկրտչյանի ու Արաշ Նոսրաթիալամդարիի կողմից Ընկերության կանոնադրական կապիտալի համապատասխանաբար 33,0 տոկոս և 33,5 տոկոս բաժնեմասերի ձեռքբերման գործարքների վերաբերյալ Դիմումները Հանձնաժողով են ներկայացվել 2021 թվականի դեկտեմբերի 17-ին՝ նշված գործարքները 2021 թվականի նոյեմբերի 29-ին Ռեգիստրում գրանցելուց՝ համակենտրոնացումը գործողության մեջ դնելուց հետո:

Դիմումներով Հանձնաժողով ներկայացված տեղեկությունների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ Ընկերության ակտիվների արժեքը 2021 թվականի հունիսի 30-ի դրությամբ և հայտարարագրեր ներկայացնելու պահին գերազանցել է Հանձնաժողովի 2021 թվականի նոյեմբերի 9-ի «Հայտարարագրման ենթակա համակենտրոնացումների մասնակիցների ակտիվների և հասույթների չափերը, համակենտրոնացման հայտարարագրման կարգը և հայտարարագրի ձևը սահմանելու և տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի 2016 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ 478-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 322-Ն որոշմամբ (այսուհետ նաև՝ **Թիվ 322-Ն որոշում**) սահմանված ակտիվների արժեքը, հետևաբար Ընկերության և ֆիզիկական անձինք Գարեգին Արմենի Մկրտչյանի ու Արաշ Նոսրաթիալամդարիի կողմից 2021 թվականի նոյեմբերի 29-ի գործարքները Ռեգիստրում գրանցելը առերևույթ պարունակում են չհայտարարագրված համակենտրոնացման դրսևորմամբ «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքի (այսուհետ նաև՝ **Օրենք**) խախտման հատկանիշներ:

3. <u>Վարույթով մասնակիցների դիրքորոշումները</u>.

Վարույթի շրջանակներում ֆիզիկական անձ Արաշ Նոսրաթիալամդարին՝ 2022 թվականի մարտի 18-ին և Ընկերությունն ու ֆիզիկական անձ Գարեգին Մկրտչյանը՝ 2022 թվականի մարտի 25-ին Հանձնաժողով ներկայացրած գրություններով նշել են, որ

Վերը նշված հանգամանքներից հետևում է, որ Ընկերությունում տեղի ունեցած գործարքը չի հանդիսացել գերիշխող դիրքի հանգեցնող կամ գերիշխող դիրքն ամրապնդող համակենտրոնացում, չեն վնասվել սպառողների շահերը:

Գործարքը սահմանված կարգով չհայտարարագրելը, սահմանված ժամկետից ուշ Հանձնաժողով դիմում ներկայացնելը չի կրում որևէ դիտավորություն, այլ ժամկետի խախտումը տեղի է ունեցել տեխնիկական վրիպման պատճառով, ուստի խնդրել են խախտված ժամկետը համարել հարգելի:

4. Հանձնաժողովի կողմից պահանջված և ստացված փաստաթղթերը և այլ տեղեկատվությունը.

4.1 «Բելգլաս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մասով.

Դիմումներով Հանձնաժողով ներկայացված տեղեկատվության համաձայն՝ Ընկերությունը գրանցվել է 2019 թվականի մարտի 22-ին, գործունեության ոլորտն է սնամեջ ապակե արտադրատեսակների արտադրությունը: Մինչև 2021 թվականի նոյեմբերի 29-ի գործարքը Ընկերության մասնակիցներ են հանդիսացել ֆիզիկական անձինք Գայանե Գագիկի Ծառուկյանը և Անի Գևորգի Մելիքյանը՝ 50-ական տոկոս բաժնեմասերով: Գործարքից հետո Ընկերության մասնակիցներն են ֆիզիկական անձինք Անի Գևորգի Մելիքյանը, Արաշ Նոսրաթիալամդարին՝ 33,5-ական տոկոս բաժնեմասերով և Գարեգին Մկրտչյանը՝ 33 տոկոս բաժնեմասով:

Ընկերության ակտիվների հաշվեկշռային արժեքը 2020 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է հազ. դրամ, հասույթի չափը՝ հազ. դրամ, իսկ 2021 թվականի հունիսի 30-ի դրությամբ և հայտարարագրեր ներկայացնելու պահին ակտիվների արժեքը կազմել է հազ. դրամ:

Համաձայն 2021 թվականի նոյեմբերի 24-ին կնքված Ընկերության բաժնեմասերի առուվաճառքի մասին պայմանագրերի՝ Ընկերության կանոնադրական կապիտալի 33 տոկոս և 33,5 տոկոս բաժնեմասերի վաճառքի գները համապատախանաբար կազմել են և հազ. դրամ:

4.2 Ֆիզիկական անձ Գարեգին Արմենի Մկրտչյանի մասով.

«Կոտայք» գարեջրի գործարան սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ նաև՝ **«Կոտայք» գարեջրի գործարան ընկերություն**) և ֆիզիկական անձ Գարեգին Մկրտչյանը 2021 թվականի դեկտեմբերի 17-ին դիմում են ներկայացրել Հանձնաժողով՝ խնդրելով թույլատրել Ընկերության և ֆիզիկական անձ Գարեգին Մկրտչյանի միջև հայտարարագրման ենթակա համակենտրոնացումը: Հանձնաժողովը 2022 թվականի հունվարի 18-ի թիվ 8-Ա որոշմամբ թույլատրել է ֆիզիկական անձ Գարեգին Մկրտչյանի կողմից «Կոտայք» գարեջրի գործարան ընկերության կանոնադրական կապիտալի 100 տոկոս բաժնեմասի ձեռքբերման միջոցով խառը համակենտրոնացումը:

Նշված վարույթի շրջանակներում ֆիզիկական անձ Գարեգին Մկրտչյանն այլ ընկերություններում ունեցած մասնակցությունների մասով նշել է, որ հանդիսանում է «Այ Ջի Բի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ նաև՝ **«Այ Ջի Բի» ընկերություն**) միակ մասնակիցը (գործունեության տեսակը՝ այլ մանրածախ առևտուր ոչ մասնագիտացված խանութներում, 2016 թվականից գործունեությունը ժամանակավոր դադարեցված է), նաև 2021 թվականի նոյեմբերի 29-ին ձեռք է բերել Ընկերության կանոնադրական կապիտալի 33 տոկոս բաժնեմասը: Նաև նշել է, որ հանդիսանում է

4.3 <u>Ֆիզիկական անձ Արաշ Նոսրաթիալամդարիի մասով.</u>

Հանձնաժողովը 2022 թվականի հունվարի 20-ի թիվ ԳԳ-119 գրությամբ դիմել է ֆիզիկական անձ Արաշ Նոսրաթիալամդարիին՝ հետևյալ տեղեկությունները ստանալու նպատակով.

1. այն տնտեսավարող սուբյեկտների ցանկը, որտեղ ֆիզիկական անձ Արաշ Նոսրաթիալամդարին ունի մասնակցություն, այդ ընկերություններում ունեցած փայաբաժնի չափը՝ տոկոսով, այդ ընկերությունների գործունեության ոլորտները (գործունեության մանրամասն նկարագիրը),

2. այն տնտեսավարող սուբյեկտների ցանկը, որոնց հետ Օրենքի 4-րդ հոդվածով ֆիզիկական անձ Արաշ Նոսրաթիալամդարին կազմում է անձանց խումբ՝ նշելով անձանց խումբ հանդիսանալու հիմքերն ու հիմնավորումները, այդ տնտեսավարող սուբյեկտների գործունեության ոլորտների մանրամասն նկարագիրը,

3. Ընկերության և վերջինիս հետ Օրենքի 4-րդ հոդվածի իմաստով անձանց խումբ կազմող անձանց հետ ֆիզիկական անձ Արաշ Նոսրաթիալամդարիի ունեցած փոխկապակցվածության դեպքում՝ փոխկապակցվածության նկարագիրը, հիմքերն ու հիմնավորումները:

Ֆիզիկական անձ Արաշ Նոսրաթիալամդարին 2022 թվականի մարտի 18-ի գրությամբ նշել է, որ վերջինիս է պատկանում «Ինթեր Թ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ նաև՝ **«Ինթեր Թ» ընկերություն**) կանոնադրական կապիտալի 100 տոկոս բաժնեմասը: «Ինթեր Թ» ընկերությունը հիմնադրվել է 2016 թվականին և մինչև 2019 թվականի ապրիլի 18-ը զբաղվել է շինանյութի մանրամեծածախ իրացումով, որից հետո ընկերության գործունեությունը ժամանակավոր դադարեցված է, 2021 թվականի նոյեմբերի 29-ից իրեն է պատկանում Ընկերության կանոնադրական կապիտալի 33,5 տոկոս բաժնեմասը:

5. <u>Գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկման արդյունքում Հանձնաժողովը հաստատված է համարում հետևյալ փաստական հանգամանքները.</u>

1) Ֆիզիկական անձինք Գարեգին Արմենի Մկրտչյանը և Արաշ Նոսրաթիալամդարին ձեռք են բերել Ընկերության կանոնադրական կապիտալի համապատասխանաբար 33 տոկոս

և 33,5 տոկոս բաժնեմասերը, փայաբաժնի ձեռքբերման գործարքները Ռեգիստրում գրանցվել են 2021 թվականի նոյեմբերի 29-ին:

2) Ընկերության գործունեության ոլորտն է սնամեջ ապակե արտադրատեսակների արտադրությունը:

3) Ընկերության ակտիվների հաշվեկշռային արժեքը 2020 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է հազ. դրամ, հասույթի չափը՝ հազ. դրամ, իսկ 2021 թվականի հունիսի 30-ի դրությամբ և հայտարարագրեր ներկայացնելու պահին ակտիվների արժեքը կազմել է հազ. դրամ:

4) 2021 թվականի նոյեմբերի 29-ի դրությամբ ֆիզիկական անձ Գարեգին Մկրտչյանին է պատկանում «Այ Ջի Բի» ընկերության կանոնադրական կապիտալի 100 տոկոս բաժնեմասը (գործունեության տեսակը՝ այլ մանրածախ առևտուր ոչ մասնագիտացված խանութներում, 2016 թվականից ընկերության գործունեությունը ժամանակավոր դադարեցված է): Գարեգին Մկրտչյանը հանդիսանում է

իսկ 2022 թվականի փետրվարի 11-ից հանդիսանում է նաև իրեն է պատկանում «Կոտայք» գարեջրի գործարան ընկերության կանոնադրական կապիտալի 100 տոկոս բաժնեմասը:

5) Ֆիզիկական անձ Արաշ Նոսրաթիալամդարիին է պատկանում «Ինթեր Թ» ընկերության կանոնադրական կապիտալի 100 տոկոս բաժնեմասը: «Ինթեր Թ» ընկերությունը հիմնադրվել է 2016 թվականին և մինչև 2019 թվականի ապրիլի 18-ը զբաղվել է շինանյութի մանրամեծածախ իրացումով, որից հետո ընկերության գործունեությունը ժամանակավոր դադարեցված է:

6) Ընկերության ակտիվների արժեքը գործարքները գործողության մեջ դնելու՝ 2021 թվականի նոյեմբերի 29-ի դրությամբ գերազանցել է Հանձնաժողովի 2021 թվականի նոյեմբերի 9-ի թիվ 322-Ն որոշմամբ սահմանված ակտիվների արժեքը:

6. <u>Վարույթի փաստական հանգամանքների և վերաբերելի իրավական նորմերի ուսումնասիրության և վերլուծության արդյունքում Հանձնաժողովը եզրահանգում է հետևյալին.</u>

1) <u>«Բելգլաս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության և ֆիզիկական անձինք Գարեգին Արմենի Մկրտչյանի ու Արաշ Նոսրաթիալամդարիի կողմից իրավախախտում կատարված լինելու հարցի կապակցությամբ.</u>

Օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ տնտեսավարող սուբյեկտների համակենտրոնացում է համարվում տնտեսավարող սուբյեկտի կողմից Հայաստանի Հանրապետությունում գրանցված այլ տնտեսավարող սուբյեկտի փայաբաժնի ձեռքբերումը, եթե դա ինքնին կազմում է այդ տնտեսավարող սուբյեկտի կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի առնվազն 20 տոկոսը կամ եթե ձեռք բերողին արդեն իսկ պատկանող փայաբաժնի հետ կազմում է այդ տնտեսավարող սուբյեկտի կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի առնվազն 20 տոկոսը:

Օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ փայաբաժնի ձեռքբերման դեպքում համակենտրոնացման մասնակիցներ են փայաբաժին ձեռք բերող տնտեսավարող սուբյեկտը և այն տնտեսավարող սուբյեկտը, որի կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալում փայաբաժին է ձեռք բերվում:

Օրենքի 13-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ Օրենքի իմաստով համակենտրոնացումը կայացվում է՝

1) միևնույն ապրանքային շուկայում (հորիզոնական համակենտրոնացում),

2) որոշակի փոխկապակցվածություն ունեցող տարբեր ապրանքային շուկաներում (ուղղահայաց համակենտրոնացում), և

3) տարբեր ապրանքային շուկաներում (խառը համակենտրոնացում):

Օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ տնտեսավարող սուբյեկտների համակենտրոնացումը մինչև գործողության մեջ դնելը ենթակա է հայտարարագրման, եթե՝

1) համակենտրոնացման մասնակիցների ակտիվների ընդհանուր արժեքը կամ մասնակիցներից առնվազն մեկի ակտիվների արժեքը համակենտրոնացման հայտարարագիր ներկայացվելու պահին կամ դրան նախորդող վերջին ֆինանսական տարում գերազանցել է Հանձնաժողովի որոշմամբ սահմանված ակտիվների արժեքը,

2) համակենտրոնացման մասնակիցների հասույթի ընդհանուր չափը կամ մասնակիցներից առնվազն մեկի հասույթի չափը համակենտրոնացման հայտարարագիր ներկայացվելու պահին նախորդող վերջին ֆինանսական տարում գերազանցել է Հանձնաժողովի որոշմամբ սահմանված հասույթի չափը:

Օրենքի 73-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտարարագրման ենթակա համակենտրոնացումը համարվում է չհայտարարագրված, եթե այն գործողության մեջ է դրվել առանց Հանձնաժողովի՝ համակենտրոնացումը թույլատրելու մասին որոշման:

Նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ հայտարարագրման ենթակա համակենտրոնացումը համարվում է արգելված, եթե՝ այն գործողության մեջ է դրվել առանց Հանձնաժողովի՝ համակենտրոնացումը թույլատրելու մասին որոշման, և հետագայում Հանձնաժողովն ամրագրել է, որ այն ենթակա է արգելման:

Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ Օրենքի իմաստով անձանց խումբն իրավաբանական և (կամ) ֆիզիկական այնպիսի անձանց խումբ է, որոնց միջև փաստացի առկա է փոխկապվածություն կամ վերահսկողություն, և որոնց նկատմամբ բավարարվում է հետևյալ պայմաններից առնվազն մեկը.

1) կազմակերպությունը և ֆիզիկական կամ իրավաբանական անձը, եթե այդ ֆիզիկական կամ իրավաբանական անձն այդ կազմակերպությունում իր մասնակցության և (կամ) պայմանագրի հիման վրա օրենսդրությամբ սահմանված կարգով իրավունք ունի ուղղակի կամ անուղղակի տնօրինելու (այդ թվում՝ առք ու վաճառքի, համատեղ գործունեության պայմանագրի, հանձնարարության, լիազորագրի կամ այլ գործարքների միջոցով) կազմակերպության կանոնադրական կապիտալի կամ փայաբաժնի կեսից ավելին (...):

Թիվ 322-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանվել են հայտարարագրման ենթակա համակենտրոնացումների մասնակիցների ակտիվների և հասույթների չափերը:

Թիվ 322-Ն որոշման 4-րդ կետի համաձայն՝ սույն որոշման հավելված 1-ով նախատեսված կարգավորումները տարածվում են նաև սույն որոշման ուժի մեջ մտնելուց հետո չհայտարարագրված համակենտրոնացման հատկանիշներով հարուցվելիք վարույթների և ընթացիկ համակենտրոնացման գնահատման վարույթների նկատմամբ:

Թիվ 322-Ն որոշման հավելված 1-ի 1-ին կետի համաձայն՝ տնտեսավարող սուբյեկտների համակենտրոնացումը մինչև գործողության մեջ դնելը ենթակա է հայտարարագրման, եթե՝

1) համակենտրոնացման մասնակիցների ակտիվների ընդհանուր արժեքը համակենտրոնացման հայտարարագիր ներկայացնելու պահին կամ դրան նախորդող վերջին ֆինանսական տարում գերազանցել է չորս միլիարդ դրամը, կամ մասնակիցներից առնվազն մեկի ակտիվների արժեքը համակենտրոնացման հայտարարագիր ներկայացնելու պահին կամ դրան նախորդող վերջին ֆինանսական տարում գերազանցել է երեք միլիարդ դրամը, կամ

2) համակենտրոնացման մասնակիցների հասույթի ընդհանուր չափը համակենտրոնացման հայտարարագիր ներկայացնելու պահին նախորդող վերջին ֆինանսական տարում գերազանցել է չորս միլիարդ դրամը, կամ մասնակիցներից առնվազն մեկի հասույթի չափը համակենտրոնացման հայտարարագիր ներկայացվելու պահին նախորդող վերջին ֆինանսական տարում գերազանցել է երեք միլիարդ դրամը:

Վերը նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ տնտեսավարող սուբյեկտի կողմից Հայաստանի Հանրապետությունում գրանցված այլ տնտեսավարող սուբյեկտի փայաբաժնի ձեռքբերումը ենթակա է հայտարարագրման հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում՝

1) եթե դա ինքնին կազմում է այդ տնտեսավարող սուբյեկտի կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի առնվազն 20 տոկոսը կամ եթե ձեռք բերողին արդեն իսկ պատկանող փայաբաժնի հետ կազմում է այդ տնտեսավարող սուբյեկտի կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի առնվազն 20 տոկոսը,

2) համակենտրոնացման մասնակիցների ակտիվների ընդհանուր արժեքը կամ մասնակիցներից առնվազն մեկի ակտիվների արժեքը համակենտրոնացման հայտարարագիր ներկայացվելու պահին կամ դրան նախորդող վերջին ֆինանսական տարում գերազանցել է Թիվ 322-Ն որոշմամբ սահմանված ակտիվների արժեքը կամ համակենտրոնացման մասնակիցների հասույթի ընդհանուր չափը կամ մասնակիցներից առնվազն մեկի հասույթի չափը համակենտրոնացման հայտարարագիր ներկայացվելու պահին նախորդող վերջին ֆինանսական տարում գերազանցել է Թիվ 322-Ն որոշմամբ սահմանված հասույթի չափը:

Միաժամանակ, Օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հանձնաժողովն արգելում է հայտարարագրման ենթակա համակենտրոնացումը, եթե՝

1) Հանձնաժողովի ուսումնասիրությունների արդյունքների համաձայն՝ համակենտրոնացման հետևանքով կանխվելու, սահմանափակվելու, արգելվելու կամ այլ կերպ վատթարանալու է տնտեսական մրցակցությունը համապատասխան ապրանքային շուկայում, կամ

2) Հանձնաժողովի ուսումնասիրությունների արդյունքների համաձայն՝ համակենտրոնացումը հանգեցնելու է գերիշխող դիրքի առաջացմանը կամ ամրապնդմանը, կամ

3) Հանձնաժողովի ուսումնասիրությունների արդյունքների համաձայն՝ համակենտրոնացման հետևանքով վնասվելու են սպառողների շահերը, կամ (...):

Օրենքի 73-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ հայտարարագրման ենթակա համակենտրոնացումը համարվում է արգելված, եթե՝ այն գործողության մեջ է դրվել առանց Հանձնաժողովի՝ համակենտրոնացումը թույլատրելու մասին որոշման, և հետագայում Հանձնաժողովն ամրագրել է, որ այն ենթակա է արգելման:

Վերոնշյալ նորմերի վերլուծությունից հետևում է, որ եթե Հանձնաժողովի ուսումնասիրությունների արդյունքում չհայտարարագրված համակենտրոնացումը հանգեցրել է համապատասխան ապրանքային շուկայում մրցակցության կանխման, սահմանափակման, արգելման կամ այլ կերպ վատթարացման կամ սպառողների շահերի վնասման, առաջացրել կամ ամրապնդել է գերիշխող դիրքը, ապա այդ համակենտրոնացումը Հանձնաժողովի որոշմամբ կհամարվի արգելված համակենտրոնացում:

Սույն գործի փաստերից հետևում է, որ ֆիզիկական անձինք Գարեգին Արմենի Մկրտչյանը և Արաշ Նոսրաթիալամդարին ձեռք են բերել Ընկերության կանոնադրական կապիտալի համապատասխանաբար 33,0 տոկոս և 33,5 տոկոս բաժնեմասերը, ձեռքբերման գործարքները Ռեգիստրում գրանցվել են 2021 թվականի նոյեմբերի 29-ին: Ընկերության գործունեության ոլորտն է սնամեջ ապակե արտադրատեսակների արտադրությունը, Ընկերության ակտիվների արժեքը գործարքները գործողության մեջ դնելու՝ 2021 թվականի նոյեմբերի 29-ի դրությամբ կազմել է հազ. դրամ:

Փաստորեն ֆիզիկական անձինք Գարեգին Արմենի Մկրտչյանի և Արաշ Նոսրաթիալամդարիի կողմից Ընկերության կանոնադրական կապիտալի համապատասխանաբար 33,0 տոկոս և 33,5 տոկոս բաժնեմասերի ձեռք բերման գործարքները ենթակա են եղել հայտարարագրման, քանի որ գործարքները գործողության մեջ դնելու՝ 2021 թվականի նոյեմբերի 29-ի դրությամբ Ընկերության ակտիվների արժեքը գերազանցել է Թիվ 322-Ն որոշմամբ սահմանված ակտիվների արժեքը:

Միաժամանակ, 2021 թվականի նոյեմբերի 29-ի դրությամբ ֆիզիկական անձ Գարեգին Մկրտչյանին է պատկանում «Այ Ջի Բի» ընկերության կանոնադրական կապիտալի 100 տոկոս բաժնեմասը (գործունեության տեսակը՝ այլ մանրածախ առևտուր ոչ մասնագիտացված խանութներում, 2016 թվականից ընկերության գործունեությունը ժամանակավոր դադարեցված է), հետևաբար ֆիզիկական անձ Գարեգին Մկրտչյանը և «Այ Ջի Բի» ընկերությունը Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն հանդիսանում են անձանց խումբ: Ֆիզիկական անձ Արաշ Նոսրաթիալամդարիին է պատկանում «Ինթեր Թ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կանոնադրական կապիտալի 100 տոկոս բաժնեմասը («Ինթեր Թ» ընկերությունը հիմնադրվել է 2016 թվականին և մինչև 2019 թվականի ապրիլի 18-ը զբաղվել է շինանյութի մանրամեծածախ իրացումով, որից հետո ընկերության գործունեությունը ժամանակավոր դադարեցված է), հետևաբար ֆիզիկական

անձ Արաշ Նոսրաթիալամդարին և «Ինթեր Թ» ընկերությունը Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն հանդիսանում են անձանց խումբ:

Այսպիսով, 2021 թվականի նոյեմբերի 29-ին ֆիզիկական անձինք Գարեգին Արմենի Մկրտչյանի և Արաշ Նոսրաթիալամդարիի կողմից Ընկերության կանոնադրական կապիտալի համապատասխանաբար 33,0 տոկոս և 33,5 տոկոս բաժնեմասերի ձեռքբերման գործարքները եթե հայտարարագրվեին մինչև գործողության մեջ դնելը, ապա ենթակա կլինեին գնահատման որպես խառը համակենտրոնացումներ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերությունն իրականացնում է սնամեջ ապակե արտադրատեսակների արտադրություն, հայտարարագրման պահի դրությամբ ֆիզիկական անձ Գարեգին Մկրտչյանի հետ անձանց խումբ կազմող «Այ Ջի Բի» ընկերությունը՝ 2016 թվականից, և ֆիզիկական անձ Արաշ Նոսրաթիալամդարիի հետ անձանց խումբ կազմող «Ինթեր Թ» ընկերությունը՝ 2019 թվականից փաստացի գործունեություն չեն իրականացրել, գործունեությունները ժամանակավոր դադարեցված են, գործունեության տեսակները հանդիսացել են Ընկերության գործունեության ոլորտից տարբեր ոլորտի ապրանքային շուկաներ:

Ուստի, Հանձնաժողովը հաստատված է համարում համակենտրոնացումների մասնակիցների կողմից, մասնավորապես՝ Ընկերության և ֆիզիկական անձինք Գարեգին Արմենի Մկրտչյանի ու Արաշ Նոսրաթիալամդարիի կողմից 2021 թվականի նոյեմբերի 29-ի հայտարարագրման ենթակա համակենտրոնացումները մինչև գործողության մեջ դնելը չհայտարարագրելը, որի կապակցությամբ օրենսդրությամբ նախատեսված է իրավական հետևանք՝ պատասխանատվության միջոցի կիրառում:

<u>Համակենտրոնացման արգելման ենթակա չլինելու հարցի կապակցությամբ.</u>

Տվյալ պարագայում Հանձնաժողովն արձանագրում է, որ Ընկերության և ֆիզիկական անձինք Գարեգին Մկրտչյանի ու Արաշ Նոսրաթիալամդարիի կողմից 2021 թվականի նոյեմբերի 29-ի չհայտարարագրված համակենտրոնացումները արգելված համարելու հիմքերը բացակայում են, քանի որ համաձայն վերը ներկայացված հիմնավորումների՝ դրանք չեն հանգեցրել տնտեսական մրցակցության կանխմանը, սահմանափակմանը, արգելմանը, այլ կերպ վատթարացմանը, չեն առաջացրել կամ ամրապնդել տնտեսավարող սուբյեկտի գերիշխող դիրքը, չեն վնասել սպառողների շահերը:

Այսպիսով, վերոնշյալից ելնելով, Հանձնաժողովը գտնում է, որ ֆիզիկական անձինք Գարեգին Մկրտչյանի ու Արաշ Նոսրաթիալամդարիի կողմից 2021 թվականի նոյեմբերի 29-ին «Բելգլաս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կանոնադրական կապիտալի համապատասխանաբար 33,0 տոկոս և 33,5 տոկոս բաժնեմասերի ձեռքբերման գործարքները, որոնք ենթակա էին հայտարարագրման, արգելված համակենտրոնացումներ չեն:

2) <u>«Բելգլաս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության և ֆիզիկական անձինք Գարեգին Արմենի Մկրտչյանի ու Արաշ Նոսրաթիալամդարիի նկատմամբ պատասխանատվության միջոց կիրառելու հարցի կապակցությամբ.</u>

Օրենքի 92-րդ հոդվածի համաձայն՝ տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման համար Հանձնաժողովն իրավասու է տնտեսավարող սուբյեկտներին,

պետական մարմիններին և դրանց պաշտոնատար անձանց տալու նախազգուշացում կամ նշանակելու տուգանք:

Օրենքի 93-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ համակենտրոնացումը չհայտարարագրելու համար նշանակվող տուգանքի չափը կազմում է մինչև հինգ միլիոն դրամ:

Օրենքի 94-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պատասխանատվության միջոց կիրառելիս Հանձնաժողովը հաշվի է առնում տվյալ իրավախախտման բնույթը, տևողությունը, իրավախախտման հնարավոր կամ փաստացի ազդեցությունը շուկայում մրցակցային իրավիճակի կամ սպառողների շահերի վրա, տնտեսավարող սուբյեկտի կողմից տվյալ խախտման կրկնակիությունը, եթե նախորդ խախտման համար պատասխանատվության միջոց կիրառելու օրվանից չի անցել հինգ տարի, տնտեսավարող սուբյեկտի դիտավորության աստիճանը, տնտեսավարող սուբյեկտի կողմից իրավախախտում կատարվելու շարժառիթները և հանգամանքները, տնտեսավարող սուբյեկտի կողմից իրավախախտում կատարելու փաստն ընդունելու կամ Հանձնաժողովի հետ համագործակցելու հանգամանքը, պատասխանատվությունից ազատելու հիմքերը, տնտեսավարող սուբյեկտի վրա նշանակվող տուգանքի հնարավոր ազդեցությունը, տվյալ տնտեսավարող սուբյեկտի գործունեության ոլորտը և տնտեսավարող սուբյեկտի պատմությունը:

Հանձնաժողովի 2021 թվականի դեկտեմբերի 28-ի «Պատասխանատվության միջոցի ընտրության և տուգանքի հաշվարկման մեթոդաբանությունը սահմանելու մասին» թիվ 395-Ն որոշմամբ (այսուհետ նաև՝ **թիվ 395-Ն որոշում**) սահմանվում է պատասխանատվության միջոցի ընտրության և տուգանքի հաշվարկման մեթոդաբանությունը (այսուհետ նաև՝ **Մեթոդաբանություն**), որի 9-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը կարող է տալ նախազգուշացում հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքերում.

1) պատասխանողն ընդունել է իրեն վերագրվող իրավախախտման փաստը, դադարեցրել է իրավախախտումը և ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ իրավախախտման հետևանքները վերացնելու նպատակով.

2) տուգանքի կիրառումն անհամաչափ է կատարված իրավախախտման համեմատ:

Սույն գործով Վարույթի շրջանակներում 2022 թվականի մարտի 18-ին ֆիզիկական անձ Արաշ Նոսրաթիալամդարին և 2022 թվականի մարտի 25-ին Ընկերությունն ու ֆիզիկական անձ Գարեգին Մկրտչյանը Հանձնաժողով ներկայացված գրություններով նշել են, որ գործարքները սահմանված կարգով չհայտարարագրելը, սահմանված ժամկետից ուշ Հանձնաժողով դիմում ներկայացնելը չի կրում որևէ դիտավորություն, համակենտրոնացումների հայտարարագրման ժամկետի խախտումը տեղի է ունեցել տեխնիկական վրիպման պատճառով՝ խնդրելով խախտված ժամկետը համարել հարգելի:

Վերոգրյալից բխում է, որ Վարույթով պատասխանողները ընդունել են իրենց վերագրվող իրավախախտման փաստը: Իսկ ինչ վերաբերում է իրավախախտման դադարեցմանը և իրավախախտման հետևանքները վերացնելու նպատակով անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելուն, ապա հարկ է նկատել, որ դրանք օբյեկտիվորեն չեն կարող իրականացվել, քանի որ չհայտարարագրված համակենտրոնացումն իր բնույթով միանգամյա խախտում է, որն արդեն կատարվել և ավարտվել է, ուստի տվյալ դեպքում նշված գործողությունների կատարման պահանջը կիրառելի չէ:

Միաժամանակ, Ընկերությունը և ֆիզիկական անձինք Գարեգին Մկրտչյանն ու Արաշ Նոսրաթիալամդարին 2021 թվականի նոյեմբերի 29-ին Ընկերության կանոնադրական կապիտալի համապատասխանաբար 33,0 տոկոս և 33,5 տոկոս բաժնեմասերի ձեռքբերման գործարքները գործողության մեջ դնելուց հետո 15 աշխատանքային օր ուշացումով՝ 2021 թվականի դեկտեմբերի 17-ին Հանձնաժողով են ներկայացրել հայտարարագրման ենթակա համակենտրոնացման թույլտվության վերաբերյալ դիմումներ, հայտարարագրեր, ինչը վկայում է, որ վերջիններիս կողմից համակենտրոնացումը չհայտարարագրելու և Օրենքի դրույթները չպահպանելու դիտավորություն չի եղել:

Ավելին, 2021 թվականի նոյեմբերի 24-ին կնքված Ընկերության կանոնադրական կապիտալի 33 տոկոս և 33,5 տոկոս բաժնեմասերի առուվաճառքի մասին պայմանագրերում փոփոխություններ և լրացումներ կատարելու (հետաձգող պայման սահմանելու) մասին համաձայնագրերի 2-րդ կետի համաձայն՝ պայմանագրերի հետաձգող պայման է հանդիսացել Ընկերության կանոնադրական կապիտալում 33,0 տոկոս և 33,5 տոկոս բաժնեմասերի համար Հանձնաժողովի կողմից օրենքով սահմանված կարգով համակենտրոնացման թույլտվություն տալը: Այսինքն՝ Ընկերությունը և ֆիզիկական անձինք Գարեգին Մկրտչյանն ու Արաշ Նոսրաթիալամդարին դիտարկել են այն, որ համակենտրոնացումը ենթակա է հայտարարագրման և վերջիններս դիմել են Հանձնաժողով: Նման պայմաններում Հանձնաժողովը գտնում է, որ տվյալ դեպքում տուգանքի կիրառումն անհամաչափ է կատարված իրավախախտման համեմատ:

Բացի այդ, ֆիզիկական անձինք Գարեգին Մկրտչյանի և Արաշ Նոսրաթիալամդարիի կողմից 2021 թվականի նոյեմբերի 29-ին Ընկերության կանոնադրական կապիտալի համապատասխանաբար 33,0 տոկոս և 33,5 տոկոս բաժնեմասերի ձեռքբերման գործարքները, եթե հայտարարագրվեին մինչև գործողության մեջ դնելը, կգնահատվեին որպես խառը համակենտրոնացումներ, մասնավորապես՝ Գարեգին Մկրտչյանը համակենտրոնացումը գործողության մեջ դնելու պահի դրությամբ Օրենքի իմաստով անձանց խումբ է կազմել «Այ Ջի Բի» ընկերության հետ, որի գործունեությունը 2016 թվականից ժամանակավոր դադարեցված է, իսկ ֆիզիկական անձ Արաշ Նոսրաթիալամդարին անձանց խումբ է կազմել «Ինթեր Թ» ընկերության հետ, որի գործունեությունը 2019 թվականի ապրիլի 18-ից ժամանակավոր դադարեցված է, ընդ որում, վերը նշված ընկերությունները գործել են Ընկերության գործունեությունից տարբեր այլ ոլորտներում (այլ մանրածախ առևտուր ոչ մասնագիտացված խանութներում, շինանյութի մանրամեծածախ իրացում): Հետևաբար Հանձնաժողովը արձանագրում է, որ 2021 թվականի նոյեմբերի 29-ին ֆիզիկական անձինք Գարեգին Մկրտչյանի և Արաշ Նոսրաթիալամդարիի կողմից Ընկերության կանոնադրական կապիտալի համապատասխանաբար 33,0 տոկոս և 33,5 տոկոս բաժնեմասերի ձեռքբերման գործարքները չեն հանգեցրել մրցակցության կանխմանը, սահմանափակմանը, արգելմանը կամ մրցակցության և սպառողների շահերի վրա այլ բացասական հետևանքի, գերիշխող դիրքի առաջացմանը կամ ամրապնդմանը:

Այսպիսով, հաշվի առնելով վերոնշյալ հանգամանքները և հիմք ընդունելով Թիվ 395-Ն որոշումը, Հանձնաժողովն արձանագրում է, որ Մեթոդաբանության 9-րդ կետով սահմանված

պայմաններն առկա են, ուստի Ընկերությանը և ֆիզիկական անձինք Գարեգին Մկրտչյանին ու Արաշ Նոսրաթիալամդարիիին անհրաժեշտ է տալ նախազգուշացում:

7. <u>Եզրափակիչ մաս.</u>

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 67-րդ հոդվածի 2-րդ մասով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 70-րդ և 71-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ Հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Բելգլաս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության և ֆիզիկական անձինք Գարեգին Արմենի Մկրտչյանի ու Արաշ Նոսրաթիալամդարիի կողմից 2021 թվականի նոյեմբերի 29-ի համակենտրոնացումները Օրենքով սահմանված կարգով չհայտարարագրելը որակել որպես չհայտարարագրված համակենտրոնացումներ (այսուհետ՝ **Օրենքի խախտում**):
2. Օրենքի խախտման համար «Բելգլաս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տալ նախազգուշացում:
3. Օրենքի խախտման համար ֆիզիկական անձ Գարեգին Արմենի Մկրտչյանին տալ նախազգուշացում:
4. Օրենքի խախտման համար ֆիզիկական անձ Արաշ Նոսրաթիալամդարիին տալ նախազգուշացում:
5. Սույն որոշումը «Բելգլաս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության և ֆիզիկական անձինք Գարեգին Արմենի Մկրտչյանի ու Արաշ Նոսրաթիալամդարիի նկատմամբ յուրաքանչյուրի մասով ուժի մեջ է մտնում դրա պատճենը համապատասխանաբար «Բելգլաս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը և ֆիզիկական անձինք Գարեգին Արմենի Մկրտչյանին ու Արաշ Նոսրաթիալամդարիին հանձնելուն հաջորդող օրվանից:
6. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:
7. Սույն որոշման բողոքարկումը չի կասեցնում դրա գործողությունը կամ կատարումը:

ՆԱԽԱԳԱՀ **Գ. ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2022 թ. ապրիլի 5
Երևան